Մկրտիչ Արմեն

Խորամանկ մարդ

Դուք գիտե՞ք ինչ հիվանդություն է պելագրան: Ոչ այն պելագրան, որը նկարագրում են բժշկական գիտության մեջ, այլ այն, որ հանդիպում է կյանքում, ավելի շուտ՝ կյանքից դուրս, ճամբարներում:

«Խորամանկ մարդը», որի անունը մի ժամանակ եղել էր Խարիտոն Սիմակով եւ որը մի ժամանակ եղել էր կոլտնտեսական գյուղացի, շատ լավ գիտեր այդ հիվանդությունը: Ոչ թե նստել էր եւ ուսումնասիրել, այլ այնքան էր տեսել, որ ուսումնասիրելուց էլ լավ էր:

Երբ այդ հիվանդության ժամանակ քորում ես մարմինդ, քորած տեղերն սպիտակում են, կարծես մաշկիդ տակ կրային շերտ էր թաքնված, եւ դու եղունգներով քերծելով մաշկդ, բաց արեցիր այդ կիրը մի քանի երիզներով:

Բայց դա ոչինչ, դա պատահում է նաեւ ուրիշ դեպքերում, առողջ մարդկանց հետ: Օրինակ՝ արեւի տակ մարմինդ երկար ժամանակ չորացնելուց հետո եւ այլն:

Պելագրայով հիվանդ մարդը կորցնում է ախորժակը… Դուք երեւակայո՞ւմ եք՝ ճամբարում, որտեղ դու ստանում ես ողորմելի սնունդ եւ չգիտես ո՞ւր չքվես քաղցից, ի՞նչ ուտես, կորցնում ես ախորժակդ…

Եվ դու դառնում ես դանդաղաշարժ, ծույլ: Իհարկե, առաջին շրջանում թե՛ քեզ, թե՛ շրջապատողներիդ, թվում է, թե դա հոգնածությունից է: Գալիս ես բարաք եւ իսկույն փռվում տախտակիդ վրա: Բայց երբ ձեր բրիգադը կանչում են ճաշ

ստանալու եւ դու վեր չես կենում՝ այ, այստեղ, եթե դու հիմար չես, պիտի հասկանաս, որ սկվում է քո պելագրան…

Մյուս կալանավորները ոչինչ չեն նկատում, որովհետեւ արագ վերցնում են իրենց ճաշամանները եւ վազ են տալիս ընթրիք ստանալու:

Միայն վերադառնալով բարաք եւ տեսնելով քեզ պառկած, հարցնում են զարմանքով . «այդ ե՞րբ ճաշեցիր»: Կամ բոլորովին էլ չեն հարցնում եւ չեն էլ նկատում: Միայն բրիգադիրն է բղավում բարկացած, որ երկու հոգի դեռ ընթրիք չեն ստացել: Շուտ արեք, ստացեք՝ եթե չեք ուզում զրկվել…

Պարզվում է, որ մեկը բացակայում է, այսօր նրան աշխատանքի են ուղարկել մի այլ բրիգադի հետ, որը դեռ չի վերադարձել: Իսկ մյուսը դու ես…

Մեջքի վրա պառկած, առանց տեղից շարժվելու, դու իջեցնում ես կաթսայիկդ սյան մեխից եւ տալով հարեւանիդ, խնդրում .

Գնա բեր իմ ընթրիքը…

Ու թեեւ գիտես, որ հարեւանդ անպիտանի մեկն է, ճանապարհին կխմի կեսը եւ դեռ գդալով էլ կհանի եղած մի քանի կարտոֆիլը եւ կուտի, բայց դա ոչինչ, դու առանց այն էլ ախորժակ չունես: Մոտեցնում ես կաթսայիկը շրթունքներիդ, ետ ես տանում եւ ամբողջը տալիս ես նրան…

Առավոտյան դու քո օրապահիկ հացը չես ուտում: Ուշադրություն դարձրեք՝ չես ուտում… Հացը՝ դա ճամբարի միակ սնունդն է՝ չհաշված կարտոֆիլի հոտ արձակող ջուրը, որը կոչվում է նախաճաշ կամ ընթրիք: Եվ չես ուտում… Տալիս ես հարեւանիդ ու խնդրում, որ դրա փոխարեն նա մի քիչ կաղամբ տա քեզ: Դու նրա մոտ կաղամբ ես տեսել: Սարսափելի ախորժակ ունես կաղամբի…

Վերցնում ես նրա տված կաղամբը, ծամում ես մի կտոր եւ թափում դուրս . ախորժակ չունես…

Երեկոյան քո ճաշը նորից տալիս ես նրան:

Հետեւյալ առավոտյան, երբ դու ստանում ես քո օրապահիկ հացը, պարզվում է, որ դա ոչ թե չորս հարյուր գրամ է, այլ երեք հարյուր, որովհետեւ երեկ դու լավ չես աշխատել եւ նորմադ չես կատարել…

Բայց դա միեւնույնն է քեզ համար, դու ախորժակ չունես: Այ, մեծ ուրախությամբ կուտեիր մի կարտոֆիլ: Խորոված, թե խաշած՝ միեւնույնն է…

Հարեւանդ ունի հենց մի կարտոֆիլ: Թոցրել է ինչ-որ տեղից: Խորոված կարտոֆիլ: Բերանիդ ջուրը կգնա:

Դու նրան ես մեկնում քո հացը, վերցնում ես կարտոֆիլը, կծում եւ իսկույն զգում ես, որ ախորժակ չունես…

Վերադարձնում ես տիրոջը…

Եթե հարեւանդ անխիղճի մեկն է՝ ոչ ոքի ոչինչ չի ասի հիվանդության մասին եւ կօգտվի քո ուտելիքից՝ մինչեւ որ ուրիշները նկատեն քո վիճակը եւ տեղեկացնեն բուժակին: Իսկ եթե նա ազնիվ մարդ է, ապա ինքն իսկույն վազ կտա եւ կհաղորդի նրան:

Քեզ կազատեն աշխատանքից, նույնիսկ կարող են պառկեցնել հիվանդանոցում: Կտան համեմատաբար լավ ուտելիք, որը կարող է օգնել քեզ եւ կարող է չօգնել՝ եթե ուշ է: Այդ դեպքում դու նման ես ոչ թե հողի, որը ծծում եւ յուրացնում է ընդունած սնունդը, այլ նման ես խողովակի, որի համար միեւնույնն է, թե ինչ է ընդունում իր մի կողմից եւ բաց թողնում մյուս կողմից՝ ջո՞ւր, կա՞թ, յո՞ւղ, թե ոչ մի բան…

Այդ ժամանակ թեկուզ ծանրոց ստացիր տնից՝ չի օգնի: Կուտես, բայց օր-օրի վրա կհյուծվես եւ դանդաղ կհանգչես ավարտվող մոմի նման…

Խարիտոնը, մոտ հիսուն տարեկան մարդ, հիանալի գիտեր այդ բոլորը: Բայց ոչ թե ուսումնասիրել էր, նրա ինչի՞ն էր պետք, այլ, ինչպես ասացինք, տեսել:

Որպես խորամանկ մարդ՝ նա ուսումնասիրում էր միայն այն, ինչը կարող էր պետք գալ իրեն: Ո՞ր ծայրից բարձրացնել գերանը, որ քեզ համար ավելի թեթեւ

լինի, քան ընկերոջդ: Որեւէ ծանրություն պարանով քաշելիս ո՞ր տեղից բռնել պարանը՝ ծայրի մո՞տ, թե հակառակը:

Եվ այլն, եւ այլն:

Իսկ պելագրա՞ն: Գրողի ծոցը գնա պելագրան՝ մյուս բոլոր հիվանդությունների հետ: Խարիտոնը դեռ ուզում է ապրել, վերադառնալ իրենց գյուղը, իր կնոջ ու զավակների մոտ…

Մի անգամ, սակայն, պատահաբար ոտքը քորելիս, նա մաշկի վրա տեսավ հազիվ նկատելի մի սպիտակ բիծ եւ շողաց հանկարծակիորեն իր գլուխը եկած երջանիկ մտքից: Այ քեզ բան… Բոլորը նրան համարում են խորամանկ մարդ, իսկ նա հիմար է եղել մինչեւ հիմա… Ինչո՞ւ չի օգտագործել պելեգրա հիվանդության պատրվակը…

Ուշ աշուն է: Շուտով կսկսվի ձմեռն իր սառնամանիքներով՝ հեռու հյուսիսի ցուրտ ձմեռը… Երջանկություն է նույնիսկ մի օրով աշխատանքի դուրս չգալը, ուր մնաց՝ ամբողջ ձմեռը…

Ուշ աշունը՝ դա այն սեզոնն է, երբ ոչ միայն տերեւներն են թափվում ծառերից, այլեւ մատները՝ քրեականների ձեռքերի վրայից: Դնում են իրենց մի ձեռքը կոճղի վրա, մյուսով վրա են բերում կացինը եւ… չկան երեք մատներ, բայց կա երեք ամսվա ազատություն անտառային աշխատանքից, իսկ այնուհետեւ միշտ թեթեւ աշխատանք՝ որպես հաշմանդամի…

Ճիշտ է, ասում են, որ այժմ, պատերազմի սկսվելուց հետո, «մարմնավնասարարության» համար գնդակահարում են մարդկանց՝ որպես սաբոտաժ անողների:

Բայց Խարիտոնը քրեական չէ, որ այդպիսի բան անի՝ թեկուզեւ չգնդակահարեն: Ինչո՞վ աշխատի գյուղում՝ եթե իր մատներից մի քանիսը թողնի հյուսիսի տայգաներում…

Ոչ, ամենաանվնասը պելագրիկ հիվանդ ձեւանալն է: Բուժակն անփորձ է, ավելի ճիշտ՝ հիմար, այնպես որ, նրան խաբելը դժվար չէ: Կպառկես ամբողջ

ձմեռը հիվանդանոցում, կստանաս հիվանդի օրապահիկ, իսկ գարնանը դուրս գալ աշխատանքի՝ արդեն սարսափելի չէ…

Իհարկե, հեշտ է այս բոլորն ասել խոսքերով: Բայց գործն ունի իր դժվարությունները: Խարիտոնին ճամբարում բոլորը ճանաչում են որպես խորամանկ մարդու եւ հենց այդպես էլ անվանում են: Այնպես որ, ոտքիդ վրա ինչ-որ պատճառով առաջացած մի սպիտակ երիզով դու չես խաբի բուժակին՝ որքան էլ որ նա հիմար լինի: Հարկավոր է նաեւ ձեւացնել պելագրայի մյուս նշանները…

Այդ օրն աշխատանքից վերադառնալով բարաք, Խարիտոնն այդպես էլ արեց: Բարձր ձայնով, որ բոլորը լսեն, նա խնդրեց իր կողքի կալանավորին՝ ստանալ իր ճաշը եւ ուտել: Ինքն ախորժակ չունի…

Առավոտյան, սակայն, Խարիտոնն իր օրապահիկ հացը չտվեց ուրիշի, բայց ինքն էլ չկերավ: Պահեց որպես ապացույց, որ իրոք, ախորժակ չունի: Եթե տար եւ առանց դրա գնար բուժակի մոտ, վերջինս կարող էր չհավատալ նրան, կարծել, թե հենց ինքն է խժռել

Ցերեկը Խարիտոնը համարյա բոլորովին չաշխատեց: Կտրեց մի ծառ եւ պառկեց աշխատողներից մի քիչ հեռու: Իհարկե, ոչինչ չուտելով առավոտյան, նա սոված էր եւ դրա հետեւանքով անուժ, բայց դա չէր գլխավորը: Նա ձեւացնում էր, այն էլ այնպես, որ բոլորը տեսնեն:

Երբ երեկոյան նա իր ընթրիկը նորից բարձրաձայն զիջեց հարեւանին, բրիգադիրը բացականչեց .

Է՛, չեղավ, բարեկամս, դու հիվանդ ես, գնա բուժակի մոտ:

Ուժ չունեմ… տնքաց Խարիտոնը՝ թաքցնելով աչքերի խորամանկ արտահայտությունը:

Բրիգադիրն ինքն օգնեց նրան՝ հասնելու բուժակի մոտ: Հրիրելով սպասող հիվանդներին, նա Խարիտոնին մոտեցրեց դռանը .

Լուրջ հիվանդ է, թողեք սրան առանց հերթի:

Խորամանկություն է անում, չգիտե՞ս դրան, բացականչեցին չորս կողմից եւ քիչ մնաց փչացնեին Խարիտոնի գործը: Բայց բրիգադիրն ինքն անձամբ ներս տարավ նրան եւ ասաց բուժակին .

Երկու օր է, որ ոչ հաց է ուտում, ոչ նախաճաշ ու ընթրիք…

Այդ վկայությունը խիստ կարեւոր էր: Բայց եւ այնպես բուժակն ուշադիր նայեց Խարիտոնի աչքերին, իսկ վերջինս դեսուդեն էր շուռ տալիս իր խորամանկ հայացքը՝ նրա հայացքին չհանդիպելու համար: Ո՞վ իմանա, որքան էլ հիմար բուժակ լինի, կարող է կռահել…

Բուժակը, բարեբախտաբար, ոչինչ չնկատեց: Մի փոքր քերեց նրա մաշկը, նայեց լեզուն, ուրիշ ի՞նչ կարող էր անել, եւ կարգադրեց .

Պառկեցնել…

Եվ ահա, Խարիտոնը, առաջին անգամ իր աքսորական տարիներում, արժանացավ հիվանդանոցում պառկելու բախտին: Նրան տվեցին խալաթ, որն այնքա՛ն թեթեւ էր՝ բամբակած հաստ հագուստների համեմատությամբ: Տվեցին նույնպիսի թեթեւ շստեր: Կարելի՞ էր արդյոք դրանք համեմատել ավտոմեքենայի մաշված անիվների ռետինից կարած մի-մի փթանոց ահագին կոշիկների հետ…

Առաջին անգամ իր աքսորական կյանքում Խարիտոնը պառկեց ոչ թե մերկ տախտակի վրա, այլ անկողնու մեջ…

Խարիտո՞ն… լսեց նա մահճակալներից մեկից, նայեց եւ հազիվ ճանաչեց: Դու է՞լ եկար…

Եկա…՝ տնքաց Խարիտոնը:

Ն՞ույնպես պելագրա…

Այո…

Հաշվիր, որ վերջ, եղբայրս: Երկու ամիս է, որ պառկած եմ, բայց ոչ մի օգուտ: Հաշվիր, որ վերջ…

Հաշվում եմ… նվազած ձայնով արտասանեց Խարիտոնը՝ հազիվ թաքցնելով իր ժպիտը:

Ամենադժվարն այն էր, որ հիվանդանոց ընկնելուց հետո չսկսեիր իսկույն խժռել այնտեղի սպիտակ հացը կամ խմել կաթը: Պետք էր մի կերպ զսպել իրեն՝ գոնե երկու օր, գոնե մի օր…

Առավոտյան Խարիտոնը մի կողմ հրեց կաթի բաժակը եւ սպիտակ հացը: Սանիտարն շտապեց բուժակի մոտ: Բուժակը եկավ, նայեց անհանգստացավ: Ստիպեց Խարիտոնին՝ գոնե կաթ խմել՝ եւ Խարիտոնը, իբր թե դժվարությամբ, խմեց կես բաժակից էլ պակաս:

Բուժակի գնալուց հետո նա մի պահ խղճի խայթ զգաց, որ այդպես անխղճորեն խաբում է ազնիվ մարդկանց եւ զբաղեցնում է որեւէ իսկական հիվանդի տեղը: Բայց երբ աչքի առաջ պատկերացրեց ձմռան սառնամանիքը, կիլոմետրերով ճանապարհը, ծանր աշխատանքն անտառում, նա փշաքաղվեց եւ վճռեց շարունակել իր ձեւացնելը՝ ինչ գնով էլ որ լինի:

Երեկոյան նա խմեց միայն մի պուտ կաթ եւ պառկեց քնելու:

Այդպես նա դիմացավ մոտ մի շաբաթ: Համարյա չէր ուտում, իսկ կաթն անպայման խմում էր բուժակի կամ սանիտարի օգնությամբ ու ստիպելով, այն էլ՝ կես բաժակից ոչ ավելի: Բայց մի անգամ, առավոտյան, նա լսեց մի լուր, որը դող գցեց նրա մարմինը:

Կենտրոնական ճամբարից եկել էր բժիշկը… Նա գալիս էր ուշ-ուշ, մի կամ երկու ամիսը մի անգամ: Եվ ահա, հակառակի պես, հիմա վեր էր կացել եւ եկել…

Բուժակի նման, բժիշկն էլ, իհարկե, բանտարկյալ էր: Հմո՞ւտ բժիշկ էր նա, թե ոչ՝ սատանան գիտե: Բայց, ինչ էլ որ լինի, շատ լավ էր, որնա չգիտեր Խարիտոնի մականունը՝ «Խորամանկ մարդ», այլապես կասկածով պիտի նայեր սուտ հիվանդին…

Բայց Խարիտոնին հաջողվեց խաբել նաեւ բժշկին: Երեւի նա էլ, որպես բժիշկ, մի բանի նման չէր, որովհետեւ արեց միայն նույնը, ինչ որ բուժակը . նայեց նրա ոտքերին, պահանջեց ցույց տալ լեզուն: Հա, նաեւ վար քաշեց նրա այտերը, նայեց աչքերի մեջ: Լսեց հիվանդության պատմությունը:

Ինչո՞ւ եք ուշ պառկեցրել, հարցրեց նա բուժակին:

Ուշ է դիմել, արդարացավ նա:

Խարիտոնը թեթեւացած շունչ քաշեց բարեհաջող ելքի համար եւ քիչ մնաց մատներ իրեն: Բայց նա իսկույն սթափվեց եւ տնքաց՝ որպես թե ծանր վիճակից:

Բժիշկը, բարեբախտաբար, շտապում էր եւ զգաղվեց մյուս հիվանդներով:

Այդ գիշեր Խարիտոն Սիմակովը, դեմքի վրա ամենախորամանկ արտահայտությամբ, մեռավ իսկական պելագրայից: